

ԱՂԲԻՒԲ-Ի  
ԽՄԲԱԴՐԻՆ

410

411

412

413

414

415

416


417

825  
Ռհ-51

xxv - ԱՄԵԱԿԻ

ԱԹԹԻՒԻ

1908 թես 23-ին



891.71-93

Ա-58  
աշ



Ա. Խ. Աննենսկայա

ԳՈՀԱՐԻԿԱՆ

1002  
6542  
պ

ՈՒ

ԱՍՏՎԱԿԱՆ

Ա. Խ. Աննենսկայ. МОИ ДВЕ ПЛЕМЯННИЦЫ.

ԹԻՖԼԻԶ

Ճարտ. Յ. Մարտիրոսյանց. | Տիպogr. Ի. Մարտիրօսյանց  
Օրբելյանովսկայ պլ., ճ. № 1 | 2.

1897

5993

Доз. ценз. Тифлисъ, 12-го Декабря 1896 г.

Գ Ո Հ Ա Բ Ի Կ Ն

ՕՒ

Ա Ս Տ Ջ Բ Կ Ը

The image shows a large, ornate initial letter 'K' from a historical manuscript. The letter is intricately decorated with a variety of botanical motifs, including roses, tulips, and other flowering plants, all rendered in a detailed woodcut or engraving style. The letter is positioned centrally, with its stem and loops extending downwards and to the sides, partially obscured by the surrounding foliage.



ըլ ձմեռը մի փոքր ծուլացել էին, ուստի արձակուրդներին պէտք է պարապեն և չեն կարող գալ, իսկ աղջիկը ուրախութեամբ ընդունում է իմ հրաւէրը: Փոլք պատասխանեց, որ իւր փոքր տղաները քութէշ են ընկել, ուստի և չեն կարող այլպիսի երկար ճանապարհորդութիւն անել, իսկ մեծ աղջկանը ուրախութեամբ կուղարկէ: Այսպէս կէս զիւժին չարաճի հիւրերի փոխարէն սպասում էինք միմիայն երկու աղջիկներին: Մենք բոլորովին չէինք ճանաչում նրանց. ես տեսել էի նրանց, երբ երեք-չորս տարեկան փոքրիկ երեխաներ էին. բոլորովին գաղափար չունէի ոչ նրանց բնաւորութեան և ոչ էլ նոյն իսկ արտաքինի մասին, ուստի աւելի մեծ հետաքրքրութեամբ էի սպասում նրանց: Քաղաքից մինչեւ մեղանից մօտիկ կայարանը նրանց պէտք է ուղեկցէր ինձ ծանօթ մի պառաւ կին, որ գնում էր իւր կալուածը, իսկ կայարանից նրանք մեր կառքով պէտք է դային մեղ մօտ:

Մեր կալուածը գտնում է կայարանից ութսուն վերստ հեռու և թէւ մեր կառապան Սարգսի վրայ կարելի էր միանդամայն յոյս դնել, որ

փոքրիկ ճանապարհորդներին անվտանգ տեղ կըհասցնէ, բայց և այնպէս, ես սաստիկ անհանգիստ էի նրանց մասին: Վերջապէս, երեկոյեան ժամը 7-ին, անտառի ծայրին, հորիզոնի վրայ փոշու մի թանձր ամպ երևաց, որի անցնելուց յետոյ պարզ կարելի էր որոշել եռաձի կառքը:

Ես դուրս վագեցի հիւրերին դիմաւորելու: Զիերը կանգնեցին թէ չէ, կառքի միջից մէկը բացազանչեց. «Է՛հ, փառք Աստուծոյ, հասանք վերջապէս.» և դուրս թռաւ մօտ տասերեք տարեկան մի աղջիկ: Ինձ տեսնելով՝ նա ամաչեց, շփոթուեց և տեղն ու տեղը մնաց կանգնած. պարզ երեւում էր, որ չգլուխէր թէ ի՞նչ անէ: Նրա զգեստը անկարգ դրութեան մէջ էր. գլխարկը բոլորովին յետ էր ընկել, վերարկուն, որ շտապով ուղեցել էր իր վրայից յետ զցել, կախուել էր շորից և երկար պոչի պէս քստում էր գետնին, իսկ ինքը՝ ամբողջովին փոշիով ծածկուած լինելով, բաւական ծիծաղելի կերպարանք էր ստացել:

Որպէս զի աղատեմ նրան այդ գժուար դրութիւնից, ես մօտեցայ նրան, բայց նոյն

բոպէին կառքից ցած իջաւ մի ուրիշ աղջիկ, հասակով առաջինից քիչ ցածը. սա միանգամայն նրա հակապատկերն էր ներկայացնում. զգեստը բոլորովին կանոնաւոր էր, միայն փոքր ինչ փոշոտուած, իսկ նրա երեսին շփոթութեան հետք անգամ չէր երևում: Կա մօտեցաւ ինձ, համարձակ կերպով իր ձեռքը դրեց իմ մեկնած ձեռքի մէջ և ցածը ու քնքոյց ձայնով ասաց.

— Բարեւ ձեզ, սիրելի մօրաքոյը. մարդիկս ու հայրիկս նոյնպէս բարեւում են ձեզ և յայտնում իրանց շնորհակալութիւնը, որ մեզ հրաւիրեցիք:

Ես համբուրեցի նրան, յետոյ դրկեցի միւսին, որ ոչ մի սիրալիր խօսք չկարողացաւ ինձ ասել, այլ միայն լուռթեամբ էր պատասխանում իմ փայփայանքներին:

Ամուսինս մօտեցաւ մեզ:

— Բարեւ ձեզ, սիրելի աղջականներս, ասաց նա, ուրախ-ուրախ նրանց ձեռք տալով:

— Այժմ մօտեցէք ինձ և ասացէք ձեր անունները:

— Իմ անունը Աստղիկ է, ասաց երկրորդը քաղաքավարութեամբ դլուխ տալով:

— Իսկ իմը Գոհար կամ Գոհարիկ, ինչպէս կամենաք, ասաց առաջինը, ազատուելով իր շփոթութիւնից:

Ես օգնեցի Գոհարիկին վերարկուն հանել և բոլորս միասին ներս մտանք տուն:

Վերնայարկում հիւրերի համար երկու բոլորովին միատեսակ սենեակ էր պատրաստած. Ես նրանց տարայ այնտեղ, որ լուացուին ու հանգստանան և խնդրեցի, որ այդ սենեակները իրանցը համարեն ամբողջ ամառուայ ընթացքում:

— Ճնորհակալ եմ, մօրաքնիր, ինչ սիրուն սենեակ է, բացազանչեց Աստղիկը:

— Իմն էլ շատ լաւն է, ասաց Գոհարիկը, բայց լուսամուտները ինչպէս փոքր են և առաստաղը ցածը. քաղաքի բարձր տներից ու մեծ լուսամուտներից յետոյ սա ինձ սաստիկ տարօրինակ է թւում:

Ես նրանց մենակ թողի և ասացի, որ շուտով ցած իջնեն թէյ խմելու: Կէս ժամ չանցած, նրանք իջան սեղանատուն: Աստղիկը նոր զգեստ էր հագել և երկար ու գանգուր մազերը առաջուանից աւելի կոկիկ սանրել, ե-

բեռւմ էր, որ շատ մաքրասէր ու ճշտապահ աղջիկ է: Գոհարիկը միայն երեսանց էր ուղղել իւր սև խիտ գանգուրները, երեսն ու ձեռները լուացել, իսկ հագուստը դարձեալ բաւական անմաքուր էր: Մենք նստեցինք թէյ խմելու. սեղանի վրայ լաւ նախաճաշ էր պատրաստած: Թէյ ժամանակ ամենքն ուրախ-ուրախ խօսում էին. ես և ամուսինս երկար ժամանակ մեր ազգականներից ոչոքի չէինք տեսել և հետաքրքրուում էինք նրանց կեանքի ամենաչնչին մանրամասնութիւններով, իսկ աղջիկները հաճութեամբ պատմում էին ամեն բան: Աստղիկը մանրամասն նկարագրեց իրանց բնակարանը և այն ուսումնարանը, ուր ինքը սովորում էր. յետոյ պատմեց թէ ինքը ինչ ծանր հիւանդութիւն է ունեցել ձմեռը. հիւանդ էր նոյնափէս քոյրը, որ դեռ բոլորովին չէ առողջացել: Գոհարիկը մեծ մասամբ իւր երկու եղբայրների մասին էր պատմում, որոնց, ինչպէս երեսում էր, շատ էր սիրում. ինքը սովորում էր օրիորդաց գլխազիւնում, իսկ եղբայրները—տղախոց: Բոլոր ազատ ժամանակը նրանք անց էին կացնում միասին: Մայրը մեռել էր Գոհարիկի ծննդեան ժամանակ,

իսկ հայրը իխատ զբաղուած էր իւր գործերով, այնպէս որ նրանք շարունակ տանը մենակ էին և միշտ երեքը միասին:

Այսպիսի խօսակցութիւններով ժամանակն աննկատելի կերպով անցաւ և մենք ժամը 11-ին գնացինք քնելու:

Հետևեալ առաւոտը, թէյց առաջ իջայ այգի, տեսա՝ աղջիկներն էլ այնտեղ են. նրանք արդէն տնտղել էին համարեա ամբողջ տունը՝ ախոռը, հաւաքունը, բակն ու բանջարանոցը: Ես հարցրի նրանց, թէ ինչպէս հաւանեցին իմ տունն ու տեղը: Աստղիկն ասաց, որ ամեն բան շատ լաւ, շատ գեղեցիկ է, բայց Գոհարիկի երեսից երևում էր, որ նա ուրիշ կարծիքի է:

— Իսկ դու, Գոհարիկ, ինչո՞ւ ես լոել և ոչինչ չես պատասխանում, հարցրի նրան:

— Ես, հօրաքոյր, միշտ մտածում եմ այն կանանց մասին, որոնք աշխատում են բանջարանոցում, ինչպէս թշուառ են նրանք. մեզ մօտ, քաղաքում, մուրացկաններն անգամ նրանցից լաւ են հագնուած: Իրանք քաղհան են անում, իսկ նրանց փոքրիկ երեխանները կեղտոտ շորերի մէջ փաթաթած պառկած են արևում:

Այնպէս մեղքս եկան, որ չէի կարողա-  
նում նրանց վրայ նայել, միթէ այստեղ այդ-  
պիսի թշուառներ շատ կան:

Եօ սկսեցի պատմել, թէ ի՞նչպէս ծանր է  
գլուզացիների կեանքը, թէ ի՞նչպօս մենք, մեր  
ոյժերը ներածին չափ, աշխատում ենք օդնել  
մեր հարևաններին և թէ, այնուամենայնիւ,  
նրքան չնչին է մեր հասցրած օդնութիւնը:

Երբ մեծանամ, անպատճառ կը գամ ձեզ  
օդնելու, ասաց Գոհարիկը և նրա դէմքը նո-  
րից փայլեց:

Երկու աղջիկների արտաքինի զանազանու-  
թիւնը, որ հէնց առաջին անգամ տեսնելիս  
լինձ զարմացրել էր, աւելի ու աւելի աչքի էր  
ընկնում, երբ ես քիչ-քիչ ծանօթանում էի  
նրանց բնաւորութեան հետ:

Աստղիկն աշխատասէր, ճշտապահ և հան-  
գարտ բնաւորութեան տէր աղջիկ էր. եկաւ թէ-  
չէ, հէնց երկրորդ օրը դասաւորեց հետը բերած  
բոլոր առարկաները, կարգի բերեց իւր սենեակը  
և այնուհետև ես ոչ մի անգամ չնկատեցի, որ  
այդ կարգ ու կանոնը խանդարուէր:

Կա իւր հետ բերել էր մի քանի գրքեր և

ամեն առաւօտ ճիշտ երկու ժամ պարապում էր:  
Պարապմունքից յետոյ դուրս էր գալիս պատշ-  
գամբ և շարունակում իւր անվերջ ձեռագործը,  
որ ձեռքից թողնում էր միայն ճաշի ժամա-  
նակ և այն երկար զբոսանքների միջոցին, որ  
մենք կատարում էինք համարեա ամեն օր,  
ճաշից յետոյ: Ես նկատեցի, որ նա աշխատում  
էր, որքան կարելի է յաճախ լինել ինձ հետ,  
միշտ սիրով պատասխանում էր իմ հարցերին,  
ուշադրութեամբ լսում էր ասածներս և երբէք  
չէր հականառում. նա միշտ աշխատում էր  
նախատեսել, թէ ի՞նչ փոքրիկ ծառայութիւն-  
ներ կարող է մատուցանել ամուսնուս, իսկոյն  
կատարում էր և իւր այդ ընդունակութեամբ  
միանգամայն զարմացնում նրան: Ծառաների  
հետ շատ քաղաքավարի էր վարւում, բայց  
միևնույն ժամանակ իրան հեռու էր պահում  
նրանցից, երբէք լիստ պատասխաններ չէր  
տալիս, նկատողութիւններ չէր անում, ոչ մի  
աւելորդ խօսք չէր ասում, ոչ մի բանի մասին  
նրանց չէր հարցնում, իւր կեանքիցն էլ ոչ մի  
մանրամասն պատմութիւն չէր անում:

«Իսկ և իսկ աղջիկ-պարոն է» ասում էին

Նրա մասին աղախինները: Նրանք, թէև ոչ  
առանձին հաճուքով, բայց ճշտութեամբ կատա-  
րում էին նրա բոլոր պատուէրները. ճիշտ է,  
սառն էին վերաբերում դէպի նրան, բայց  
յարգում էին:

Գոհարիկը ոչ մի բանով նման չէր իւր  
հօրաքրոջ աղջկանը: Նա վերին աստիճանի աշ-  
խոյժ, կայտառ և միշտ մի որևէ նորութեամբ  
գրաւուղ աղջիկ էր. կարծես նրա մտքովն էլ  
չէր անցնում, թէ աշխարհիս երեսին դոյտթիւն  
ունին կարդ ու կանոն և մաքրութիւն:

Նրա բերած սպիտակեղէնն ու զգեստները  
թափթփած էին իրան յատկացրած սենեակում  
սեղանի ու աթոռների վրայ և այդպէս էլ  
մնացին, մինչև որ աղախինը եկաւ ու հաւա-  
քեց:

Այն զրքերը, որ նա կարդում էր, շատ  
անդամ գիշերում էին պատշզամբում և պար-  
տիզում: Յաճախ պատահում էր, որ թէին  
կամ ճաշին ամբողջ ժամերով սպասում էին  
նրան, որովհետև ամեն մի զբաղմունք այնպէս  
էր գրաւում նրան, որ մոռանում էր ամեն  
ինչ: Տան բոլոր ծառաների հետ նա ծանօթա-

ցաւ, կամ կարելի է ասել ընկերացաւ իւր գա-  
լու հէնց առաջին օրերից: Ճատ շուտ տեղե-  
կացաւ մեր տան մէջ ապրողների ընտանեկան  
կեանքին. մինչեւ անդամ հարեան զիւղում  
նա ճարեց իրան սիրելի տղաներ և աղջիկներ.  
որոնց հաւաքում էր և ամբողջ ժամերով լսում  
նրանց պատմածները, կամ ինքն էր պատմում  
զանազան բաների մասին: Նա մի քանի  
ամսով մեծ էր Աստղիկից և արտաքինով աւելի  
էր նմանւում «աղջիկ-պարոնի», բայց ամենքը  
նրան փոքր աղջկա: Մեղ էին ընդունում և  
երբէք «աղջիկ-պարոն» չէին կանչում, այլ ուղ-  
ղակի Գոհարիկ: Ես նկատել էի, որ ծառաներն  
էլ երբեմն նրա պատուէրները անհոգութեան  
էին տալիս:

Մի անդամ պատահմամբ մտնելով նրա  
սենեակը՝ ես ներկայ եղայ հետևեալ տեսարանին.  
աղախինը—Մոֆիան բարկացած կանդնած էր  
սենեակի մէջ տեղը, իսկ Գոհարիկը շղարշէ  
ճխլտած զգեստը ձեռին՝ կանդնած էր մի փոքր  
հեռու. Նրա դէմքը բարկութիւնից կարմրել էր.  
աչքերը արտասուքով լիքն էին. նա ոտները  
յատակին էր խփում և զարպացած աղաղակում:

— Ի՞նչպէս համարձակուեցար մոռանալ,  
չի որ ասել էի քեզ, թէ այսօր ուրիշ  
ոչինչ չունիմ հագնելու, անպիտան. այս ասելով  
ճիշտած զգեստը շպրտեց աղախնի երեսին:

Իմ ներկայութիւնը վերջ դրեց այդ վըր-  
դովեցուցիչ տեսարանին: Սոֆիան վերցրեց զգեստն  
ու դուրս գնաց, իսկ Գոհարիկը մօտեցաւ լու-  
սամուտին և սկսեց այնտեղից դուրս նայել, որ  
թագյնի ինձնից իւր կարմրած դէմքը:

— Միթէ քաղաքումն էլ այդպէս էիր  
վարում ծառաների հետ, Գոհարիկ, մի քանի  
բոպէ լուռ մնալուց յետոյ հարցրի ես:

Նա իմ հարցին չպատասխանեց և դուրս  
վաղեց սենեակից, իսկ քառորդ ժամից յետոյ  
վերադարձաւ կարմրած աչքերով և ասաց  
յուղուած ձայնով.

— Հօրաքո՞ր, ինդրեմ չկարծէք, թէ ես  
չարասիրտ աղջիկ եմ. ոչ, հէնց այս բոպէին  
ներողութիւն խնդրեցի Սոֆիալից և մենք  
հաշտուեցինք. նա բոլորովին նեղացած չէ ինձ-  
նից:

Գոհարիկը շատ ճիշտ էր ասում. ես հէնց  
նոյն օրը համողուեցի, որ Սոֆիալի մտքովն

անդամ չէր անցել բարկանալ նրա վրայ:  
— Գոհարիկը յաճախ է այդպէս կոպիտ  
վարում, հարցրի ես երեկոյեան:

— Ի՞նչ էք ասում, աղջիկ-պարոն, զգացուած  
պատասխանեց Սոփիան. միթէ Գոհարիկը կո-  
պիտ է. ես էի մեղաւորը, որ նրա զգեստը չէի  
հարթկել, խնդրեմ չբանդիմանէք նրան. նա  
շատ բարի է և մեր բոլորիս սիրելին:

Սոփիան ճշմարիտ էր ասում. մեր տանը  
Գոհարիկին ամենքն էլ սիրում էին, և սիրում  
էին ոչ իբրև «աղջիկ-պարոնի», որի պատուէրնե-  
րը պէտք էր ճշտութեամբ կատարել, այլ իբրև  
իրանց մտերմին, իբրև իրանց հաւասարին, որի  
արարքները կարելի էր ներել և որի բաւակա-  
նութեան համար շատ բան կարելի էր զոհել:

Գոհարիկի դալու հէնց առաջին օրերից իմ  
և նրա մէջ ընկերական սերտ յարաբերութիւն  
հաստատուեց: Զեմ կարող ասել, թէ նա մի ա-  
ռանձին յարգանքով էր վերաբերում ինձ. նա  
յաճախ չէր լսում իմ խորհուրդները և ինքնա-  
գլուխ բաներ էր անում, իսկ աւելի յաճախ՝ չէր  
համաձայնում իմ կարծիքների հետ և տաք-  
տաք վիճաբանում էր. երբեմն մինչեւ անդամ

խիստ նշաններով ցոյց էր տալիս, որ իմ այս  
կամ այն վարմունքը չի հաւանում: Ես չեմ  
կարող այս բոլորի համար բարկանալ նրա  
վրայ, որովհետեւ համանում էի, որ նա բոլո-  
րովին միտք չունէր ինձ վիրաւորելու, գիտէի  
որ այդ խիստ պատասխանները նա տալիս էր,  
որովհետեւ չգիտէր իրան զսպել: Ընդհակառակը,  
ինձ դուր էր գալիս նրա համարձակ ճշմարտա-  
խօսութիւնը:

Ամուսնուս մօտ Գոհարիկն սկզբում իրան  
զսպում էր և շատ քիչ էր խօսում. ինչպէս  
յետոյ ինքը ինձ խոստովանեց, ամուսինս նրան  
մուայլ ու չարասիրտ էր թուացել, այդ պատճա-  
ռով էլ իրան հեռու էր պահում նրանից և  
մինչեւ անգամ դժգոհ էր, որ նստում էր նրա հետ  
միւնոյն սենեակում: Ճշմարիտ որ ամուսինս, իբրև  
լուրջ և ծանր բնաւորութեան տէր մարդ, չէր կա-  
րող հէնց առաջին անդամից դուր գալ մի արդարի  
աշխատ աղջկան: Անհրաժեշտ էր մի դէպք, որ  
Գոհարիկը ծանօթանար ամուսնուս բնաւորու-  
թեան լաւ կողմերի հետ: Այդպիսի յարմար ա-  
ռիթ պատահեց նրանց գալուց մօտ երկու շա-  
բաթ յետոյ:

Մի անգամ ամուսինս ճաշին ուշացաւ և  
որովհետեւ նա միշտ ժամանակին էր գալիս, և  
սկսեցի անհանգստանալ, բայց յետոյ յայտնի  
եղաւ, որ իմ երկիւղը բոլորովին զուր էր: Կէս  
ժամից յետոյ նա առողջ և անվնաս եկաւ տուն,  
միայն փոխանակ մտնելու սեղանատուն, որտեղ  
մենք նստած սպասում էինք, անցաւ գնաց  
իւր սենեակը. այդ ինձ շատ զարմացրեց: Ստի-  
պուած էինք էլի քառորդ ժամ սպասել, մինչեւ  
որ նա վերջապէս եկաւ մեղ հետ ճաշելու:

— Ի՞նչ պատահեց, որ այդպէս ուշացար,  
յուղուած ձայնով հարցը ես:

— Ո՛չինչ, ուրախ պատասխանեց նա. Ես  
ակամայ ստիպուած էի ջրի մէջ ընկնել, ուստի  
առաջ պէտք է շորերս փոխէի:

Յետոյ նա պատմեց, որ դաշտով անցնելիս,  
ինքը նկատում է, թէ ինչպէս մի խումք գիւ-  
ղացի երեխաներ գետակի ափին խաղում են:  
Ուզում է մօտենալ, որ զգուշացնէ նրանց, բայց  
յանկալծ մի աղաղակ է լսում. բանից դուրս է  
գալիս, որ մի փոքրիկ տղայ, չկարողանալով  
սահուն ափի վրայ կանդնել, չուրն է ընկնում:  
Ամուսինս, իսկոյն հանելով իւր վերնազգեստը,

ջուրն է մտնում այդ խեղճ երեխային աղատելու: Գետակը թէև մեծ չէր, բայց շատ արագավազ էր, այնպէս որ երկար ժամանակ նա չէր կարողացել երեխային գտնել: Վերջապէս բաւական չարչարուելուց յետոյ՝ յաջողում է ափը դուրս բերել փոքրիկ տղի անզգայ մարմինը: Յոյս ունենալով՝ թէ զեռ կարելի է խեղճին կեանք տալ, իսկոյն նրան տանում է գիւղ, գտնում է նրա ծնողների տունը և այնտեղ գործ է դնում այն միջոցները, որ ինքը գիտէր խեղդուղներին աղատելու համար: Վերջապէս յաջողում է երեխային ուշքի բերել և յանձնել ծնողների հոգացողութեանը: Ամուսինս շատ վառ գոյներով նկարագրեց խեղճ մօր սարսափն ու յուսահատութիւնը այն վայրկեանին, երբ նա տեսաւ իւր սիրելի որդու անշնչացած դիակը և ապա նրա ուրախութիւնն ու երջանկութիւնը, երբ մանուկը՝ բանալով աչքերը, թոյլ ձայնով «մայրիկ» ասաց:

Մենք սաստիկ յուզուեցանք այդ պատմութիւնից: Գոհարիկը մերժ կարմրում, մերժ գունատում էր և երբ ամուսինս վերջացրեց իւր խօսքը, նա յանկարծ վեր թռաւ տեղից, ընկաւ

ամուսնուս պարանոցովն ու սկսեց համբուրել նրան, ասելով.

— Հիմա ես տեսնում եմ, որ դուք բարի և լաւ մարդ էք:

Այդ բողէից նա այլևս չէր քաշւում իմ ամուսնուց, սիրով խօսում էր նրա հետ, տուն վերադառնալու ժամանակ խոկոյն վազում էր. զիմաւորելու նրան և նրա զրասեղանը ծաղկեայ փնջերով էր զարդարում:

Հրաւիրելով երկու աղջիկներին՝ ես կարծում էի, թէ նրանք երկուսով աւելի ուրախ կանցկացնեն ամառը մեղ մօտ: Սակայն տարբեր բնաւորութիւն ունենալով՝ նրանք չէին կարող հաշտ ապրել: Համարեա ամեն օր նրանց մէջ անբաւականութիւն էր ծագում: Աստղիկը, որ հանդարտ բնաւորութեան տէր, դատող, կշռող ու մտածող աղջիկ էր, իրաւոնք էր համարում բարձրից նայել իւր հօրաքրոջ «անկապ» աղջկայ վրայ: Իսկ Գոհարիկը չէր կարողանում տանել նրա հանգարտ ու սատը դատողութիւնը և միշտ կծու պատախաններ էր տալիս: Անբաւականութիւնն առհասարակ սկսում էր չնչին պատճառներից:

— Ո՞հ, Աստուած իմ, ի՞նչ շող է, մարդ  
քիչ է մնում խեղզուի, տրտնջում էր Գոհարիկը  
և ընկնում բազկաժոռի վրայ:

— Ամբողջ օրը վազվում եա, ի հարկէ  
կըշողես, խելացի կերպով նկատում էր Աստղիկը:  
Այստեղ ստուերում հանգիստ նստիր, էլ չես  
շոգիլ:

— Ճատ հետաքրքրական կըլինի այ, ամբողջ  
օրը նստել մի տեղում, բարկացած առարկում  
էր Գոհարիկը: Քիչ էլ մնաս կասես, թէ որպէս  
զի չշողեմ, պէտք է քո անպիտան անձեռոցիկ-  
ները գործեմ:

Աստղիկը լուսում էր, նմանուելով այն փոր-  
ձառու մարդկանց, որոնք շատ լաւ են հասկա-  
նում, թէ ի՞նչքան անախորժ բան է շարու-  
նակել խօսակցութիւնը մի բարկացած մարդու  
հետ:

— Ինչու չես պատասխանում, Աստղիկ,  
եթէ ինձ հետ խօսելն անպատութիւն ես հա-  
մարում, ապա ուրեմն չարժէր սկսել:

— Ի՞նչպէս խօսեմ քեզ հետ, նկատում  
էր Աստղիկը, քանի որ դու բարկանում  
ես:

— Ես ամենեին չեմ բարկանում, բայց և  
չեմ կարողանում ձկան նման հէնց ամեն բանի  
վրայ քաղցրութեամբ ժպտալ:

— Սակայն, որքան ինձ յայտնի է, ձուկը  
չէ ժպտում, սառնութեամբ պատասխանում է  
Աստղիկը:

— Դրանից ի՞նչ դուրս եկաւ. ձկները չեն  
ժպտում, բայց ձկան պէս պաղարիւն մարդիկ  
ժպտում են, այդ քեզ աւելի լաւ պէտք է  
յայտնի լինի, Աստղիկ, որովհետեւ ինքու էլ  
ձկան պէս պաղարիւն ես: Աստղիկի երեսին ար-  
համարական ժպիտ էր երեսում, իսկ Գոհարիկն  
աւելի ու աւելի տաքանում էր և վերցանում  
նրանով, որ մի շարք յանդուդն նկատողութիւն-  
ներ թափելով Աստղիկի գլխին, արտասուալից  
աչքերով դուրս էր վազում սենեակից:

Գոհարիկը սաստիկ դիւրազդիու էր, ուս-  
տի այսպիսի դէպքեր յաճախ էին կրկնում և  
ես միշտ սաստիկ խղճում էի նրան, որովհետեւ  
յետոյ անկեղծօրէն փոշմանում էր և ջերմ կեր-  
պով ներողութիւն խնդրում:

— Միքելիս, ասացի ես Գոհարիկին մի  
անդամ, նրա զղջման բոպէին, միթէ չես

տեսնում, որ քո դիւրագրգռութեամբ ինքդ  
քեղ աւելի ես տանջում, քան թէ ուրիշին:  
Միթէ երբէք ցանկութիւն չես ունեցել այդպիսի  
դէպքերում քեղ զսպել և բնաւորութիւնդ աւե-  
լի մեղմացնել:

— Աշմարիտն ասած, հօրաքոյր, մինչև իմ  
այստեղ գալը, ես կեանքումս ոչ մի անգամ  
այդ բանի մասին չէի մտածել: Տանը յաճախ  
կուռում էի եղբայրներիս հետ, բայց այդ առ-  
հասարակ այսպէս էր լինում. իմ մի անախորժ  
խօսքի փոխարէն նրանք ինձ պատասխանում  
էին երկու երեք աւելի անախորժ խօսքերով,  
մենք միմեանց կշտամբում էինք, բայց մի քա-  
ռորդ ժամից յետոյ դարձեալ այնպէս էինք  
խօսում միմեանց հետ, կարծես թէ մեր մէջ ո-  
չինչ պատահած չլինէր: Այսպիսով ես երբէք  
ստիպուած չեմ եղել զզջալ նրանց ասած  
խօսքերիս համար: Բայց այստեղ, երբ Ասողիկն  
լնձանից նեղանում է, իսկ դուք այնպէս տը-  
խուր նախում էք ինձ, ես զզում եմ, որ վատ  
աղջիկ եմ և այդ ինձ սաստիկ տանջում է:

Եւ ճշմարիտ որ նա սրտանց զզում էր  
իւր պակասութիւնները: Ես նկատում էի, որ

նա մինչև անգամ ջանք էր գործդնում ուղ-  
ղուել. թէև այդ երբեմն չէր յաջողւում նրան:  
Ես պատրաստ էի զանց առնել նրա թերու-  
թիւնները և այդ պատճառով ինձ դուր չէր  
գալիս, որ ամուսինս բոլորովին ուրիշ տեսակ էր  
նայում այդ հանգամանքի վրայ: Երբ Գոհարիկը  
նրա ներկայութեամբն էր այդպէս զրգուած  
խօսում, նա շատ յաճախ ընդհատում էր նրան  
բաւական խխտ նկատողութիւններով, ինչպէս  
օրինակ՝ «Էլի չափից անցաւ» կամ «ոհ, ինչ  
զզուելի բնաւորութիւն է»: Եւ այսպէս ասելով  
նա բարկացած դուրս էր գնում սենեակից: Մի  
օր ես մինչև անգամ վախեցայ, կարծելով թէ  
մի գուցէ նա բոլորովին պտէ այդ աղջկան նրա  
անգուստ և կրշտ վարմունքների համար:

Այդ դէպքը պատահեց մի անձրեացին օր,  
ճաշից յետոյ, երբ եղանակը խանգարեց մեղ  
զբունելու գնալ: Ես երկու աղջիկների հետ  
նստած էի հիւրասենեակում: Գոհարիկը մեղ  
համար բարձր ձայնով կարդում էր Թիկկէնսի  
«Գօմբին և որդին» զրուածքը, իսկ ես և Ասո-  
ղիկը ձեռագործով էինք զբաղուած և միւնոյն  
ժամանակ լսում էինք նրան: Յանկարծ ամու-

սինս ներս մտաւ. Նրա երեսից ես իսկոյն նը-  
կատեցի, որ բարկացած է:  
—Երեւակայի՞ր, թէ ի՞նչ է պատահել, ասաց  
նա, սեղանի վրայ գցելով իւր թաց զլխարկը և  
նստելով ինձ մօտ, աժոռի վրայ. այն ցորենը,  
որ անցեալ տարի քաղաքում դնեցի և փորձի  
համար ցանեցի մեր պարտիզի յետևի կողմում,  
փչացել է:

—Ի՞նչու, հարցրի ես: Այս մասին այս  
—Այն պատճառով, որ մեր ապուշ Մար-  
կոսը էլի ձիերը բաց է թողել և այսօր նրանք  
առաւոտից արածելիս են եղել իմ արտում: Այս,  
ես նրան...

Այդ ըսպէին հիւրասենեակի դուռը ճռուաց  
և ներս մտաւ մի կարճահասակ, նիկար զիւղա-  
ցի, դունատ ու շփոթուած դէմքով:

—Ներեցէք, պարոն, աղերսելով դիմեց նա  
ամուսնուա:

—Ի՞նչու ես եկել այստեղ, բղաւեց նրա  
վրայ ամուսինս, չասացի՞ քեզ, որ չհա-  
մարձակուես ինզրել անգամ: Այս, դու անհոգ,  
անպիտան, անսասուններին էլ չես կարողանում  
նայել: Մինչև փչացածի փոխարէն տուգանք

չվճարես, ես քո ձիերը չեմ վերադարձնի:  
—Բայց որտեղից վճարեմ, չէ՞ որ քեզ էլ  
յայտնի է իմ ունեցածն ու չունեցածը:  
—Ոչինչ չեմ ուզում լսել, կարողութիւն  
չունիս վճարելու, ուրեմն ուշքդ զլխիդ պահիր:  
չեռացի՞ր այստեղից, ես խօսել անգամ չեմ կա-  
մենում քեզ հետ:

—Խղճա, պարոն, գոնէ մանրիկ երեխա-  
ներիս խղճա, հիմա գործի ժամանակ է, ա-  
ռանց ձիերի ի՞նչ պէտք է անեմ: աշնանը ի՞նչ  
տուգանք որ նշանակես, կըվճարեմ:

—Ո՛չ, աշնանը չէ, հիմա պէտք է վճա-  
րես, աւելի ու աւելի տաքանում էր ամուսինս:

Այս տեսարանը շատ ծանր տպաւորութիւն  
էր թողնում: Ես գիտէի, որ հանդարտուելուց  
յետոյ ամուսինս կըփոշմանէր իւր անգութ-  
իսուքերի վրայ, գիտէի նոյնալիս, որ իմ  
միջամտութիւնն աւելի պէտք է գրգռէր նրան,  
բայց միւնոյն ժամանակ ցաւում էի և սրտանց  
խղճում թշուառ Մարկոսին: Ես նայեցի աղջիկ-  
ներին: Ասողիկը հանդարտ ու անվրդով շարու-  
նակում էր իւր ձեռագործը, կարծես ոչինչ չէր  
լսում. մինչ-գեռ Գոհարիկն իսկոյն զիրքը փա-

կեց. նրա այտերն ալրում էին, աչքերը փայլում, ես ուղում էի մի որևէ նշանով կանգնեցնել նրան կամ մի կերպ սենեակից դուրս տանել, բայց արդէն շատ ուշ էր. նա վեր թռաւ տեղից և մօտենալով ամուսնում՝ լուզուած ու դողդոջուն ձախով առաց.

—Քեռի, ամօթ չէ, որ այդպէս վիրաւորում էք այդ խեղճ գիւղացուն. դուք հարուստ էք, մեծ բան չէ, եթէ ձեր արտերից մէկը փչացել է, բայց նա առանց ձիերի չէ որ չի կարող աշխատել: Միթէ կամենում էք սովամահ անել նրան և նրա երեխաներին:

Աղջկայ այս անսպասելի միջամտութիւնը կարծես զարմացրեց թէ ամուսնուս և թէ Մարկոսին: Մարկոսը ապշած նայում էր իւր պաշտպանին, իսկ ամուսինս այնպէս զարմացած էր, որ մինչև անգամ չընդհատեց աղջկայ վառվուն խօսքերը:

—Քո դործը չէ, լոիր, բղաւեց նա, երբ Գոհարիկը վերջացրեց իւր խօսքը:

—Չեմ լոի, պատասխանեց Գոհարիկը զարացած. վերադարձէք Մարկոսին իւր ձիերը, դուք իրաւունք չունէք նրանց պահելու:

—Յանդմագն աղջիկ, աղաղակեց ամուսինս և արագ քաղերով դուքս գնաց սենեակից ու դուռը այնպէս խփեց, որ լուսամուտները դըղրդացին: Մարկոսը գլուխը կախ գցած՝ տխուր ու տրտում հետևեց նրան: Գոհարիկն ուզում էր գնալ նրա յետելից, բայց ես կանգնեցրի:

—Թող, Գոհարիկ, ասացի. քեռիդ չար մարդ չէ, նա գիտէ, թէ ի՞նչպէս պէտք է վարուի. դու քո միջամտութեամբ գործն աւելի փչացրիր:

—Ի՞նչպէս թէ չար չէ, երբ խեղճ գիւղացուն այդպէս նեղացնում է:

—Այդ դու աւելի լաւ պէտք է իմանաս քան ուրիշը: Դու էլ քեզ չար չես համարում, բայց քանի անգամ ըոսէական կրքի ազդեցութեան տակ, բոլորովին զուր տեղը վիրաւորել ես մարդկանց:

—Ուրեմն այդ բոլորը քեռիս ասում էր ըոսէական կրքի ազդեցութեան տակ: Դուք համոզուած էք, որ նա կրվերադարձնէ Մարկոսի ձիերը:

—Համոզուած եմ, բայց գիտեմ նոյնպէս, որ դու քո անտեղի միջամտութեամբ նրան մեծ անբաւականութիւն պատճառեցիր:

Այսպէս խիստ արտասանած խօսքերս շը-  
փոթեցրին Գոհարիկին:

— Ես սաստիկ խղճացի Մարկոսին և նե-  
ղացաւ քեռուս վրայ, ասաց նաև կարծես կամե-  
նալով արդարանալ: Իսկ դու, Աստղիկ, միթէ  
չխղճացիր Մարկոսին:

— Ինչու պէտք է ես ուրիշի գործին  
խառնուիմ՝ քեռիս ինձնից մեծէ և աւելի  
խելօք, միթէ կրհամարձակուիմ նրան բան  
սովորեցնել:

Ես տեսայ, որ Գոհարիկն ուզում է մի  
կծու նկատողութիւն թուցնել բերանից՝ իբրև  
պատախան Աստղիկի այս սառն ու անտարբեր  
խօսքերին, բայց որպէս զի նոր խռովութեան  
առաջն առնեմ, վերցրի Թէկկէնսի վէպը և  
հարցրի, թէ արդեօք կըլսե՞ն, եթէ բարձրածայն  
կարդամ: Աստղիկն իրան յատուկ քաղաքավարու-  
թեամբ շնորհակալութիւն յատնեց, իսկ Գոհա-  
րիկը լուռ ընկաւ լուսամուտի մօտ դրած բաղ-  
կաթուի վրայ. նրա դէմքից նկատեցի, որ  
ընթերցանութիւնը բոլորովին հետաքրքրելու չէ  
նրան: Ես սկսեցի կարդալ, թէ և նրանցից մի-  
այն մէկն էր լսում. միւսի մտքերը թուչում էին

սենեակից դուրս, հեռու, հեռու և ինձ թւում  
էր, թէ նա երևակայութեամբ հետևում է  
Մարկոսին և տեսնում, թէ ինչպէս Մարկոսը  
տուն վերադառնալով՝ կալուածատիրոջ անգր-  
թութեան տխուր պատմութիւնը հաղորդում է  
իւր ընտանիքին:

Ամուսինս ամբողջ երեկոն զբաղուած էր,  
այնպէս որ ինձ չյաջողուեց նրա հետ խօսել:  
Հետևեալ առաւոտը ես դիտմամբ աւելի վաղ  
վերկացայ, որպէս զի մինչև նրա դաշտ գնալը  
կարողանամ տեսնել նրան. բայց նրգան զար-  
մացայ, երբ պատշգամբը դուրս դալով՝ տեսայ,  
որ նա դաշտի միջի նեղ շաւզով դալիս է դէ-  
պի տուն, իսկ նրա կողքից, ուրախ-ուրախ  
լեզուին տալով դալիս է Գոհարիկը: Ես շտա-  
պով դիմաւորեցի նրանց:

— Հաշտուեցիք արդէն, հարցրի ես:

— Զէր կարելի չհաշտուել, ծիծաղելով  
պատախանեց ամուսինս, այս չարաճճին ապա-  
ցուցեց, ինչպէս երկու անգամ երկուսը չորս է,  
որ եթէ ինքը մեղաւոր էր, ես աւելի ևս մե-  
զաւոր էի և այդ պատճառով էլ իրաւունք  
չունիմ բարկանալու:

— Իսկ Մարկոսը: — Մենք հենց այժմ նրա մօտ հիւր էինք, բայց ատրեց Գոհարիկը. քեռիս վերադարձրեց նրա ձիերը և ոչ մի տուգանք էլ չի վերցնի: Մի խօսքով ամեն բան հիանալի կերպով վերջացաւ և ես շատ ու շատ ուրախ եմ:

— Գոհարիկը փոքրիկ ուլի նման թուչկոտում էր ու երգում. դա ապացուց էր նրա սրտի ուրախութեան: Ես ևս շատ ուրախացայ, որ գործն այդպէս յաջողութեամբ վերջացաւ և որ ամուսինս Գոհարիկի վրայ չէր բարկանում: Առանց այդ էլ նա բաւական յաճախ էր նեղացնում նրան իւրանհանգիստ բնաւորութեամբ: Ջատ անգամ, երբ ամուսինս զբաղուած էր լինում լուրջ գործերով, նա վագում էր նրա առանձնասենեակը և ընդհատում նրա պարապմունքը որևէ դատարկ պատմութիւնով: Անուսինս երբեմն համբերութեամբ, թէւ թըթուած դէմքով, լսում էր նրան մինչև վերջը, բայց երբեմն էլ բաւական խստութեամբ ասում էր.

— Է՞հ, հեռացիր, ես ժամանակ չունիմ քո լիմարութիւնները լսելու:

Նա առանց վիրաւորուելու հեռանում էր այն մտազրութեամբ, որ մի կէս ժամկց յետոյ դարձեալ վերադառնայ՝ շատախօսութեան նոր պաշարով:

Մեր տան կարգ ու կանոնը նա բոլորովին խանգարել էր: Բաւական էր, որ մի կէս ժամ մնար սենեակում և արդէն կամ կահկարասիքի մի մասը տեղից շարժուած էր լինում, կամ յատակի վրայ թղթի կտորներ թափթփած, կամ մի որևէ գիրք սեղանի վրայից աթոռի վրայ տեղափոխած և այն: Այսպիսի անկարգութիւններ էր անում Գոհարիկը: Ծառաներն այժմ սենեակները հաւաքելու համար երկրու անգամ աւելի ժամանակ էին կորցնում, քան ձմեռը: Աղախինը հաւատացնում էր, որ Գոհարիկի համար անհամեմատ շատ է աշխատում, քան Աստղիկի համար, թէւ Աստղիկի թէ զդեստները և թէ սպիտակեղէնը միշտ աչքի էին ընկնում իրանց մաքրութեամբ, իսկ Գոհարիկը շատ անգամ բոլորովին կեղտոտ զգեստով էր մանգալիս: Ես և Աստղիկը ստիպուած էինք մեր ձեռագործի արկղները միշտ կողպած պահել, որովհետև նա մի ասեղ կամ գնդասեղ վերցնելիս՝ ամեն բան

իրար էր խառնում: Ո՞րքան ծաղկիներ փչացրեց  
նա մեր պարտիզում, իւր անգառութեան  
շնորհիւ ոտնատակ անելով նրանց և ո՞րքան  
ամանեղէն կոտրեց մեղ մօտ ամառը. բայց այդ  
բոլորի համար նա ստիպուած էր բաւական  
յանդիմանութիւններ և խրատներ լսել ոչ միայն  
ամուսնուց ու ինձնից, այլ և մեր ծեր ծեր  
աղախնից. վերջինս իրան թոյլ չէր տալիս նրա  
յետեւից ոչ մի վատ խօսք ասելու, բայց երեսին  
յաճախ փնթփնթում էր: Մենք անդադար  
ստիպուած էինք օրինակ բերել Աստղիկին և  
այնքան շուտ-շուտ նկատողութիւններ էինք  
անում Գոհարիկի մանր յանցանքների համար,  
որ կարելի էր կարծել, թէ մենք բոլորովին  
չենք սիրում նրան և նա մի բեռն է դարձել  
մեղ համար: Բայց միւնոյն ժամանակ երկար  
միջոց չլսելով նրա ուրախ ծիծաղը՝ ես միշտ  
տիրում էի, ոչոք նրա պէս չէր կարող ամուս-  
նուս լաւ տրամադրութեան մէջ դնել, իսկ ա-  
մուսինս երկար զբօսանք ձեռնարկելիս՝ ոչոքի  
այնպէս սիրով չէր վերցնում իւր հետ, ինչպէս  
նրան: Մի դէպք աւելի լաւ ցոյց տուեց մեղ, թէ  
ո՞րքան թանգէ մեղ համար այդ աղջիկը, որ յաճախ

մեր համբերութիւնը ի չարն է դորձ դնում:  
Մեր կալուածից մի քանի վերատ հեռու  
հոսում էր մի մեծ ու լայն գետ, որի լեռնոտ  
ու զառիվայր ափերը մի անսովոր գեղեցիկ  
տեսարան էին ներկայացնում: Այդ գետի ափին  
գտնուած էր շատ սիրուն դիրք ունեցող մի  
փոքրիկ գիւղ: Ես և ամուսինս առհասարակ  
ամեն ամառ երկու-երեք անդամ գնում էինք  
այդ գիւղը: Մի անդամ Գոհարիկի և Աստղիկի  
ներկայութեամբ լիշեցինք այդ ճանապարհոր-  
դութիւնների մասին: Գոհարիկի աչքերն խսկոյն  
փայլեցին:

— Ես տարի էլ կրգնանք, հարցրեց նա:  
— Այս, մի անդամ պէտք է դնալ, պատաս-  
խանեց ամուսինս:

— Բայց երբ, վաղը զնանք, քեռի, հոգիս,  
սկսեց ինդրել անհամբեր աղջիկը:

— Այդ էր պակաս, գուցէ կամենաս հէնց  
ալո՞ր գնալ: Զէ՞ որ ես լի օրերը ժամանակ  
չունիմ, զբաղուած եմ, եթէ կիրակի լաւ եղա-  
նակ լինի, կարելի է զնանք:

— Օ՛, կիրակի, իսկ այսօր չորեքշաբթի է.  
ունիմ անուն ունի ու ուս ոչ ոչ ունիմ

արդքան երկար պիտի սպասենք. աւելի լաւ է վաղը գնանք, պնդում էր Գոհարիկը:

— Բաւական է, Գոհարիկ, կարծես իսկ և իսկ փոքր երեխայ լինիս, ընդհատեցի ես նրա խօսքը: «Զէ որ Աստղիկը նոյնպէս կամենում է գնալ, բայց նա յիմար աղաջանքով ուրիշներին ձանձրութիւն չի պատճառում»:

Գոհարիկը մի փոքր նեղացաւ, բայց այդ երկար չուեց. երբ ես և Աստղիկը ոկտեցինք խորհրդակցել, թէ ինչպէս լաւ և յարմար կարելի է կազմակերպել մեր ճանապարհորդութիւնը, նա էլ շատ շուտով մասնակցեց մեր խօսակցութեանը և նորից ուրախացաւ:

Վճռեցինք, որ կիւրակի օրը վաղ ճաշենք — ժամը երկուսին, և յետոյ իսկոյն ճանապարհ ընկնենք:

Կիրակի օրը շատ շոգ էր:

— Զյետաձգենք արդեօք մեր ճանապարհորդութիւնը, առաջարկեցի ես, պատճառաբանելով թէ այսպիսի տօթ եղանակին զրօսանքը մեծ բաւականութիւն չի պատճառի մեղ:

— Ի հարկ է, աւելի լաւ է այն ժամանակ գնանք, երբ շոգ չի լինի, իսկոյն համաձայնեց

Աստղիկը, թէ նրա ձայնից նկատում էր, որ իմ առաջարկութիւնը նրան դուք չեկաւ: Իսկ Գոհարիկը աղաղակեց.

— Ա՛խ, չէ, սիրելի հօրաքոյր, այսօր գնանք: Ինչու յետաձգենք, չէ՞ որ քեռիս խոստացաւ կիրակի գնալ. այնպէս չէ, քեռի:

— Թէ՛ լաւ, լաւ, հանդստացիր, իսկոյն միջամտեց ամուսինս. այսօր պէտք է գնանք, ինչ արած, ասաց նա դառնալով դէպի ինձ. եթէ չգնանք, Գոհարիկն ամբողջ շաբաթէլ հանգիստ չի տայ ինձ, բացի դրանից Աստղիկն էլ, ինչպէս տեսնում եմ, այսօր է կամենում գնալ: Մենք կարող ենք այնտեղ մնալ մինչև հովն ընկնելը:

— Այո, այսօր, պատասխանեց Աստղիկը, բայց եթէ մօրաքոյրս չի կամենում, ոչինչ, կարելի է և յետաձգել:

— Չէ, չէ, անկարելի է յետաձգել, յայտարարեց Գոհարիկը, հօրաքոյրս համաձայն է, այնպէս չէ, հօրաքոյր:

— Է՛հ, լաւ, եթէ ձեր ամենիդ ցանկութիւնն է, թող այդպէս լինի, ժպտալով ասացի

ես, միայն թէ երեկոյեան անձրև չդայ, արել  
սաստիկ ալրում է:

Ճշմարիտ որ կէսօրից յետոյ երկնքի վրայ  
ամպեր երեացին, բայց Գոհարիկը մի խօսք  
անզամ չէր թող տալիս ինձ ասել այդ մասին  
և այնպէս սաստիկ զբաղուած էր ճանապարհի  
պատրաստութիւններով, որ միանդամայն ան-  
խղճութիւն կըլինէր զրկել նրան այդ բաւակա-  
նութիւնից:

Փամը Յ-ին մենք բոլորս նստեցինք մի  
մեծ կառք, ուր առաջուց դրուած էին զամ-  
բիւղներով լի թէյ, շաքար, ուտելիքի պաշա-  
րեղէն և զանազան մանր-մունր ընծաներ, որ  
ես տանում էի գեղեցիկ զիւղի մեր ճանօթ  
զիւղացիներին:

Խօսելով ու ծիծաղելով մենք կառք նստե-  
ցինք և պարարտ ձիերը թոցըին մեղ հարթ  
ճանապարհով: Արևն անտանելի կերպով ալրում  
էր, բայց շոգից կարծես միայն ես էի տանջուում:

Երկու աղջիկներն էլ թոչունի պէս ուրախ  
էին. ամուսինս հաճութեամբ մասնակցում էր  
նրանց ուրախութեանը: Մինչև զետը տասերկու-  
վերստ էր: Ճանապարհը անցնում էր մերթ

դաշտերի միջով, ուր հաճարի հասած դեղին  
համկերը մեղմ տատանուում էին, մերթ խիտ  
անտառի միջով, որի բարձր ծառերը մուազ  
ու անշարժ էին և արեգակի ճառագայթները  
հաղիւ էին թափանցում նրանց միջով:  
Պօտ մի ժամ գնալուց յետոյ մեր կառքը մի  
պտոյս էլ արաւ և մենք յանկարծ զուրս եկանք  
զետի ափը: Մինչև այդ՝ մենք գնում էինք  
խիտ անտառի միջով, ուստի չէինք տեսնում  
թէ ինչ կայ մեր շուրջը և երբ մեր առաջ  
յանկարծակի բացուեց զետի տեսարանը, մեր  
հիացումը չափ չունէր: Լայն ու արագնթաց  
գետը, որ ամբողջովին շողշողում էր արեգակի  
ճառագայթներից, ոլոր մոլոր պտոյտներ անելով,  
անյայտանում էր հորիզոնի վրայ, կարծես կոր-  
չում էր խիտ ու թաւոտ անտառում: Այն ափը,  
որի ուղղութեամբ մենք գնում էինք, աւագոտ  
զառիվայրով ցած էր իջնում, իսկ հակառակ  
ափը ներկայացնում էր մի շարք բլրակներ,  
որոնցից իւրաքանչիւրը զանազանուում էր իւր  
առանձին դիրքով: Ամենք կառքից իջանք և  
ոտով գնացինք, իսկ կառքը զիւղը գնաց:  
Ամենքս աւելի զբունել էինք ուզում, քան թէ

թէլի կամ նախաճաշխիկի պատրաստութիւն  
տեսնել, ուստի և սիրով համաձայնեցինք Գո-  
հարիկի հետ, որ առաջարկեց լաստով անցնել  
գետի միւս ափը և շրջել գեղեցիկ բլրակների  
վրայ:

Ամենաբարձր բլրակից երևում էր մօտակայ  
փոքրիկ քաղաքը, իւր շրջակայքով: Մենք  
երկար ժամանակ զմայլում էինք այդ տեսա-  
րանով. ման եկանք մի շատ գեղեցիկ ծառաս-  
տանում, վերադարձանք գետի այն ափը և  
քառորդ ժամից յետով գիւղ հասանք: Մեր ծա-  
նօթ գեղջկուհին, որի մօտ մենք սովորաբար  
իջնում էինք, իսկոյն պատրաստեց հեշտաելու  
և սեղան ու աթոռներ տարաւ դրեց գետի ա-  
փին, մի մեծ ծառի ստուերի տակ: Մենք մը-  
տանք նրա խրճիթը: Ես մեր աղջիկներին ծա-  
նօթացը գեղջկուհու մեծ ընտանիքի հետ,  
բաժանեցի բերած ընծաներս, լսեցի նրա պատ-  
մութիւնները զիւղական զանազան նորութիւն-  
ների մասին, ինքս հազորդեցի զանազան լու-  
րեր մեր կալուածքում ապրող նրա ծանօթների  
մասին. այսպէս խօսելով մօտ մի ժամ անցաւ  
աննկատելի կերպով

Երբ գուրս եկանք խրճիթից և ուզում էլինք  
տեղաւորուիլ ինքնաեռի ու նախաճաշխիկ շուր-  
ջը՝ եղանակի փոփոխութիւնը բոլորիս զարմաց-  
րեց: Թեթև քամին, որ առաւօտից սկսած  
փչում էր, բաւականին սաստկացաւ, փոքրիկ  
ամպերը, որոնք սահում էին երկնքի երեսին,  
թանձրացան ու մուալ գոյն ստացան, իսկ ա-  
րևելքից դանդաղ բարձրանում էր մի մեծ ամպ:  
— Ճուտ պէտք է գնալ, անպատճառ փո-  
թորիկ կը լինի, շտապեցրեց մեզ ամուսինս և  
ինքը գնաց կառապանին որոնելու. վերջինս  
ձիերը արձակել էր մարզադետնում արածելու,  
իսկ ինքը ետ էր դնացել իւր կնքահօր մօտ,  
որ ապրում էր զիւղի միւս ծայրում:

Մենք շտապով մի մի բաժակ թէլ իմե-  
ցինք, մեր բերած բոլոր պաշարը տուինք տան-  
տիկնոջը և անհամբեր սպասում էինք կառքին:  
Մինչև կառապանի զալն ու կառքը լծելը ամ-  
բողջ կէս ժամ անցաւ, իսկ երկինքն աւելի ու  
աւելի ահարկու տեսարան էր ներկայացնում:  
Մի մոխրագոյն ամպ ծածկեց արևը, իսկ մի  
ալ մեծ ու ահեղ ամպ էլ արագութեամբ բար-  
ձրանում էր զէպի երկինք: Յանկարծ փալուն

կայծակը ճեղքեց նրան մի ծալրից մինչեւ միւսը:  
Սարսափելի փոթորիկ կըլինի, աւելի լաւ  
է սպասէք, խորհուրդ էին տալիս մեզ գիւղա-  
ցիք և մենք համաձայնեցինք, որ այդ աւելի  
խելացի կըլինի: Քամին աւելի ու աւելի սաստ-  
կանում էր, ամպերը պատում էին երկինքը,  
հեռւում լսում էր ամպի որոտումը, իսկ կայ-  
ծակը աւելի յաճախ էր փայլատակում: Փոթո-  
րիկն արագութեամք մօտենում էր և վերջապէս  
սարսափելի կերպարանք ստացաւ: Քամին ա-  
ւազի ամբողջ սիւներ էր բարձրացնում, մատ-  
ղաշ ծառերը կուայնում էր մինչեւ գետին, իսկ  
հների ճիւղերն այնպէս էր փետում, որ կարծեո  
թէ կամենում էր մաս-մաս անել նրանց: Ամ-  
պերն անընդհատ որոտում էին, շլացուցիչ կայ-  
ծակը ճեղքում էր երկինքը: Մենք բոլորս  
չոխիսիմէի սենեակը հաւաքուած սպասում էինք  
մըրբիկի անցնելուն: Նրա փոքր երեխաները թագ  
էին կացել պուճախներում և ամպի իւրաքան-  
չիւր որոտի ժամանակ երկիւղից աղաղակում  
էին: Աստղիկը նոյնպէս վախենում էր, նա  
սատիկ գունատուել էր և անդադար ցնցում  
էր: Մինչեւ անդամ փոհարիկն էլ հանգստացել

էր և լսում էր շատախօս չոխիսիմէի մի ինչոր  
պատմութիւնը: Մըրբիկը մի քանի բոպէ հան-  
դարտուեց, մենք արդէն լուսով էինք, թէ  
շուտով ամպերն էլ կըցրուեն, երբ յանկարծ նո-  
րից փայլեց կայծակը, լուսաւորելով խրճթի բո-  
լոր անկիւնները. նոյն բոպէին լսուեց մի այն-  
պիսի խացուցիչ որոտմունք, որ մենք ամենքս  
տեղերիցս վեր թուանք: Հաղիւ թէ որոտմունքը  
անցել էր, ահա դրսից ձայներ լսեցինք:  
— Հրդեհ, հրդեհ, այլում ենք:  
Մենք դուրս վաղեցինք փողոց, որ տես-  
նենք ինչ է պատահել և սարսափից քարա-  
ցանք. կայծակն այլել էր մի խրճիթ, իսկ  
խիստ քամին սպառնում էր հրդեհը տարածել  
ամբողջ գիւղում: Գիւղացիք դգալով, որ իրանց  
ունեցածից զրկուելու են, զլուխները բոլորովին  
կորցրել էին. նրանք ոչ միայն չեին աշխատում  
իրանց տունը կրակից աղատել, այլ և չեին  
մտածում նոյն իսկ իրանց տան իրեղէններն  
աղատելու մասին: Վերջապէս ամուսնուս յաջող-  
ուեց իւր շուրջը հաւաքել մի տասը գիւղացու և  
համոզել նրանց, որ հրդեհը հանգցնեն: Արակն  
արդէն տարածուել էր և մի խրճթի փոխարէն

Երեքն էր այրում: Հարկաւոր էր որքան կարելի է շուտ ջուր հասցնել և հարևան տների վրայ ածել, որպէս զի գոնէ նրանք ազատուէլն: Այս բանն ամուսինս բացատրեց գիւղացիներին, և նրանք ամուսնուա ղեկավարութեամբ սկսեցին աշխոյժով աշխատել: Ես իմ ինսամքի տակ առայ երեխաներին. ընդհանուր շփոթութեան ժամանակ նրանցից շատերին վտանգ էր սպառնում: Հրդեհը զուարճութիւն էր պատճառում միայն մեծ երեխաներին. նրանք համարեա ուղղակի կրակի մէջն էին ընկնում, մինչդեռ փոքրերը ոչինչ չէին հասկանում և հանգիստ մնում էին խրճիթում, իսկ նրանց սարսափած մայրերը կամ մոռացել էին իրանց երեխաներին, կամ եթէ նրանց հետ էին լինում, չէին կարողանում ազատել իրանց կայքը: Մասամբ փաղաքշանքով, մասամբ սպառնալիքներով ինձ յաջողուեց բոլոր երեխաներին հաւաքել շուրջս, փոքրիկ մարդագետնի վրայ. այդտեղից երեւում էր հրդեհը, բայց մեզ վտանգ չէր սպառնում:

Գոհարիկն օգնում էր այն կանանց, որոնք ազատում էին իրանց կայքը: Ես տեսնում

էի, թէ ինչպէս նա, զանազան իրեղեններ ձեռին՝ յետ ու առաջ էր փաղում և կամ աշխատում էր լացողներին սիրտ տալ ու միխթարել:

Միայն Աստղիկը ոչ մի բանի չէր մասնակցում. նա հաստ շալով փաթաթուած՝ նստած էր ինձնից մի քանի քայլ հեռու և կայծակից կամ ընկնող գերանների ճայթիւնից շարունակ վեր էր թռչում:

Ամբողջ գիւղում սարսափելի խառնակութիւն էր տիրում: Լացը, հեծեծանքն ու մի քանի տասնեակ մարդկանց ճախների աղմուկը խառնում էին քամու շուոյի և այրուող ու ընկնող գերանների ճայթիւնի հետ: Գլուղացիների մի փոքր մասը միայն զբաղուած էր հրդեհը հանգցնելով, մնացածները գլուխը կորցրած՝ յետ ու առաջ էին փաղում և իրանք էլ չէին հասկանում թէ ինչ են անում: Ինձնից մի քանի սաժէն հեռու նստած էր գիւղացիների մի խումբ, որ բաղկացած էր վեց կանանցից և չորս տղամարդկանցից. կանայք գետնի վրայ նստած՝ լաց էին լինում, իսկ արդամարդիկ յուսահատ և անշարժ նայում էին

կրակին. նրանց թւում էր, թէ դա մի այն-  
պիսի գժբաղդութիւն է, որի դէմ մաքառելն  
իղուր է: Եւ ճրմարիտ, հրդեհը հանդինելու  
համար զործ դրան բոլոր ջանքերը շատ էլ  
չօդնեցին: Գիւղում ոչ հրշէջ մեքենաներ կային  
և ոչ էլ ջրհան, պէտք էր տակառներով գե-  
տից ջուր բերէին և դուրերով ածէին կրակ ըն-  
կած խրճիթների վրայ. բայց այդ զործողու-  
թիւնը շատ դանդաղ էր կատարւում. մինչդեռ  
քամին հեռու և հեռու էր տանում խանձողնե-  
րը: Փոթորիկը, որի վրայ էլ ոչոք ուշադրու-  
թիւն չէր դարձնում, քիչ-քիչ սկսեց հանդարտ-  
ուել և վերջապէս բոլորովին զայգարեց. արել  
մայր մտաւ, ամպերը ծածկեցին երկինքը, շու-  
տով վրայ հասաւ մութը և աւելի սաստկացրեց  
ամենքի սարսափի:

Յանկարծ, բոլորովին անսպասելի կերպով  
քամին խր ուղղութիւնը փոխեց և ծիսի ամպերն  
ու խանձողները դէպի գետը քշեց:

Նոյն բոպէին սկսուեց և լորդառատ անձ-  
րեր: Այս կերպ միայն գժբաղդ գիւղը աղատուեց.  
բայց չէ, ի՞նչ եմ ասում, ի՞նչ աղատուել, էլ  
համարեա բան չէր մնացել, որ աղատէին,

ամբողջ գիւղում մնացել էին անվնաս միայն  
բաղանիքը և երեք խրճիթ. մնացածը ամբող-  
ջովին զոհ էր գնացել կրակին:

Մենք այնքան սպասեցինք, մինչև որ  
համոզուեցինք, թէ հրդեհը վերջաբաւ և խեղճ  
գիւղացիները ուշը եկան: Անվնաս մնացած  
տների հիւրասէր տէրերը ապաստան առաջար-  
կեցին այն բոլոր մարդկանց, որոնք կարող էին  
տեղաւորուել այդ տներում. բայց զրանք այն-  
քան փոքր էին, որ միայն ծերերին ու երեխա-  
ներին կարող էին տեղ տալ: Մեծերն ստիպուած  
էին բացօթեալ գլշերել տեղատարափ անձրեւի  
տակ: Պէտք է ասած, որ այն սարսափելի  
գժբաղդութիւնից յետոյ գիւղացիներն երեխ ա-  
ռանձին ուշադրութիւն չդարձրին այս գժուա-  
րութեան վրայ:

Հաղիւ թէ այդ խեղճերին յաջողուէր քնի  
մէջ զէթ մի բոպէ մոռանալ իրանց վիշտը:

Մենք բոլորովին թրջուած, սառած, յուղ-  
ուած՝ կառք նստեցինք և ուղւորուեցինք գէ-  
պի տուն: Ես պարզ երեակայում էի այն գիւ-  
ղացիների գլութիւնը, որոնց դէմքերը վշտից  
ու երկվաղից կիսախելագարի արտայատութիւն

Էին ստացել, ականջներումս դեռևս հնչում էին  
կանանց ճիշն ու աղաղակը. խեղճերը յուսա-  
հատութիւնից համարեա թէ կրակի բոցերի մէջ  
էին ընկնում, որպէս զի իրանց կայքի գէթ մի  
մասը ազատել կարողանան: Երեւի թէ իմ ու-  
ղեկիցներն էլ ինձ նման շատ ծանր տպաւորու-  
թեան տակ էին, զոնէ երկար ժամանակ ոչոք  
չէր ընդհատում մեր կառքում տիրող խորին  
լուութիւնը. մինչդեռ զիւղը գնալիս՝ ամենքս  
էլ ուրախ-ուրախ խօսում էինք:

Ամենից առաջ խօսեց Աստղիկը:

— Ահա, տեսնում ես, Գոհարիկ. ասաց  
նա, երբ մենք արդէն կէս ճանապարհն անցել  
էինք, մօրաքոյրս ճիշտ էր ասում, թէ աւելի  
լաւ է զբոսանքը յետաձգենք. եթէ ուրիշ ան-  
գամ գնալինք, ուրախ ժամանակ կանցկացնէինք,  
իսկ այսօր բաւականութեան փոխարէն միայն  
անախորժ դէպերի հանդիպեցինք:

— Ընդհակառակը, աղաղակեց Գոհարիկը,  
ես կարծում եմ, որ այժմ հօրաքոյրս էլ ուրախ  
կըլինի, որ մենք նրան չլսեցինք: Եթէ քեռիս  
ըինէր, ամբողջ զիւղը երեւի կայրուէր և զիւ-  
ղացիք իրանց գոյքից ոչինչ չէին կարողանալ

ազատել, իսկ առանց հօրաքրոջս օդնութեան  
երեխաներն էլ կարող էին ալուել:

— Բայց ամենից լաւն այն է, որ այժմ  
մեզ յայտնի է այդ անբաղդութիւնը և ժամա-  
նակին կարող ենք օդնութիւն հասցնել հրկիդ-  
եալներին, նկատեց ամուսինս:

— Բայց ինչպէս պէտք է օդնէք նրանց,  
հարցըց գոհարիկը: Արդեօք փայտ կըտաք  
նրանց, որ իրանց համար նոր տներ շինեն:

— Ոչ, նրանց դեռ փայտ պէտք չէ, նը-  
րանք հիմա միջոց չունին տուն շինելու, ո-  
րովհետև հնձի ժամանակ է. իմ կարծիքով ա-  
ւելի լաւ կըլինի, եթէ այժմ նրանց վեղ տամ  
փոխարինաբար, այսպիսով նրանք կարող են  
ժամանակաւորապէս տեղափոխուել այտեղից  
երեք վերստ հեռու գտնուող զիւղը, իսկ ձմեռը  
որքան փայտ հարկաւոր լինի՝ ես կըտամ:

— Հոխիմիմէն իւր ունեցածից ոչինչ չը-  
կարողացաւ աղատել, ասացի ես, հրդեհը նրա  
խրճթից սկսուեց. նա վեց երեխայ ունի. նրան  
պէտք է զոնէ կտաւ ուղարկել:

— Ես կուղարկեմ նրան իմ ունեցած երկու  
ռուբլի քառասուն կոպէկը, յայտնեց Գոհարիկը:

նու նոյնպէս կուղարկես, չէ Աստղիկ, Հարցրեց  
դա, չէ որ դու էլ փող ունիս

— Այս, բայց չեմ կարող ուղարկել, պա-  
տսսխանեց Աստղիկը. այդ փողերը մայրիկս  
տուեց, որ այստեղից գնալիս, ծառաներին բա-  
ժանեմ:

— Ինձ էլ հայրիկս պատուիրեց, որ ծառա-  
ներին բաժանեմ, բայց ես աւելի լաւ եմ հա-  
մարում ծառաներին տալ իմ բոլոր թաշկինակ-  
ները, թիկնոցներն ու զղեստները, իսկ փողերս  
ուղարկել չուփսիմէին, որովհետև այժմս էլ  
կարծես աչքիս առաջն է, թէ ինչպէս նա  
սարսափելի կերպով աղաղակում էր և նայում  
կըակին:

ՄԵԿՔ գիշերը ժամը 2-ին տուն հա-  
սանք: Չնայելով գրան, Գոհարիկը չէր ուզում  
քնելու գնալ, մինչեւ որ ամուսինս չհաշուեց և չա-  
սց, թէ մըքան գումար կարող է փոխ տալ  
դիւղացիներին: Յետոյ նա կպաւ ինձ և հարց-  
նում էր, թէ չէ կարելի արդեօք բացի կտակց  
պաշարեղէն էլ ուղարկել հրկիղեալներին: Ես  
համաձայնեցի, որ սկզբում կարելի է ալիւր և  
բըինձ բաժանել նրանց, բայց բացարեցի նոյն՝

պէս, թէ տանը պատրաստի այնքան պաշար  
չունինք, որ կարողանանք ամբողջ գիւղը կե-  
րակըել և թէ հրկիղեալները փողով, առանց մի  
որևէ դժուարութեան, թէ քաղաքում և թէ  
հարեան գիւղում, կարող են ճարել, ինչ որ ի-  
րանց անհրաժեշտ է:

— Լաւ, բայց այդ ամենը երբ կըտանենք  
նրանց համար, բայտ երևոյթին գոհ մնալով իմ  
բացարութիւնից՝ հարցրեց Գոհարիկը:

— Գուցէ հէնց վաղը, եթէ ի հարկ է, ե-  
ղանակն աւելի լաւ կըլինի, ասացի ես մի  
փոքր դող զգալով և ականջ դնելով անձրեսի  
շփշփոցին, որ բաղխում էր լուսամուտը:

— Այդ շատ լաւ կըլինի, ուրախութեամբ  
բացագանչեց Գոհարիկը: Ուրեմն փողերը հէնց  
այժմ տուէք մեղ, քեռի, որովհետև վաղը, երբ  
դուք պէտք է զործի գնաք, մենք դեռ քնած  
կըլինենք, իսկ փողերը մինչեւ ճաշ պէտք է  
գիւղ հասցնել:

Ամուսինս այդ նկատողութիւնը միանգա-  
մայն իրաւացի գտնելով՝ գիւղացիների համար  
որոշուած գումարը Գոհարիկին տուեց:

— Բայց լի՞ր, Գոհարիկ, ասացի ես, բարի

գիշեր մաղթելով նրան, եկէ վաղն էլ այդ-  
պիսի անձրև լինի, դիւդ գնալը մտքեցդ հա-  
նիր:

Հետևեալ առաւօտը, երբ զարթեցի, զլուխս  
այնպէս սաստիկ ցաւում էր, որ աչքերս բոլո-  
րովին չէի կարողանում բանալ: Ես գլխացաւ  
ունէի, որ ամեն մի խիստ յուզմունքից յետոյ  
կրկնուում էր և տեսում մի քանի ժամ: Աղա-  
խնիս յայտնի էր իմ այդ հիւանդութիւնը և  
ինձ օգնելու միջոցը: Նա փակեց ննջարանիս  
լուսամուտների փեղկերը, հսկում էր, որ ոչք  
չմօտենայ իմ սենեակին և ժամանակ առ ժա-  
մանակ հանգստացնող գեղ էր տալիս: Այսպէս  
ամբողջ առաւօտը ես անցկացրի մթութեան և  
լութեան մէջ: Ժամը երեքին գլխացաւս ան-  
ցաւ. ես վեր կացայ, հաղնուեցայ, եկայ միւս  
սենեակը և երբ լուսամուտից դուրս նայեցի,  
տեսայ, որ անձրեւ հեղեղի պէս թափում է:  
Հիւասենեակում հանդիպեցի Ասողիկին. նա  
ողջունեց ինձ, քաղաքամարի կերպով հարցրեց  
իմ առողջութեան մասին և յետոյ դարձեալ  
շարունակեց իւր ձեռադործը:

— Իսկ Գոհարիկն ուր է, հարցրի ես:

— Գոհարիկը չլայ, նա գնաց:

— Ի՞նչպէս թէ գնաց, այս անձրեւին ուր  
գնաց:

— Ես նրան ասացի, որ զուք կընեղա-  
նաք, բայց նա չլսեց ինձ. վաղուց է որ գնա-  
ցել է:

— Ո՞վ է գնացել, այդ միջոցին ներս մըտ-  
նելով հարցրեց ամուսինս:

Ես բացատրեցի:

— Ի՞նչպէս թէ գնացել է, բայց ում հետ,  
զարմացաւ նա. վաղ առաւօտից կառապանն  
ինձ հետ էր և մենք այժմս միայն վերադար-  
ձանք: Ասողիկ, նա ում հետ գնաց:

— Զդիտեմ:

Վերջապէս ծառաներին հարցրին: Բանից  
զուրս եկաւ, որ չարաճնի աղջիկը կառապանին  
տանը շդտնելով նրա տասերկուտարեկան որդուն  
է հրամայել մի ձի լծել սալին, յետոյ սալի  
վրայ դնել տալով մի պարկ ալիւր, մի պարկ  
բրինձ, տանը եղած բոլոր հացը և կտաւ, փո-  
քրիկ կառապանի ուղեկցութեամբ ճանապարհ  
է ընկել դէպի գիւղ:

— Փամը քանիսին գնաց, անհանգստութեամբ հարցնում էինք մենք:

— Մօտ 11-ը կը լինէր:

— Տասնումէկին, իսկ հիմա չորսն է: Անշուշտնրան մի որ և է անբաղդութիւն է պատահել. և ինչ զարմանալու բան է՝ ինքն երեխայ և գնացել է մի երեխայ կառապանի հետ, որ հազիւ կարող է ձին քշել, իսկ անձրեն այնպէս է փչացրել ճանապարհները, որ փորձուած կառապանն էլ զգուշութեամբ պիտի քշէ:

— Տէր Աստուած, ինչ չարաձնի աղջիկ է, ասում էր ամուսինս արագ-արագ յետ ու առաջ գնալով: Այդ գործողութիւնը արտայայտում էր նրա սաստիկ անհանգստութիւնը: — Ահա սա հանգիստ նստած է իւր համար, աւելացրեց նա, ցոյց տալով Աստղիկին, իսկ նա... չէ, անպատճառ պէտք է գնար: Ես նայեցի Աստղիկին և նրա դէմքի անդորրութիւնն ինձ յանկարծ անախորժ թուաց. ես զգացի, որ պատրաստ եմ տասն արդպիսի հանդարտ ու անդորր աղջիկներ տալ մի Գոհարիկի փոխարէն:

Գոհարիկը դեռ չէր եկել, իսկ ժամացոյցն

արդէն չորսը լիփեց: Ճաշը վաղուց պատրաստ էր, բայց մեղանից ոչոք չէր կարողանում բերանում մի կտոր դնել. ես և ամուսինս սաստիկ անհանգիստ էինք, Աստղիկն էլ անքաղաքավարութիւն էր համարում ճաշել, երբ մեծերը դեռ չէին ուղում ուտել:

— Ես ձիաւոր կուղարկեմ նրան դիմաւորելու, ասաց ամուսինս ժամը չորս և կէսին: Այնուհետև էլլի կէս ժամ սպասեցինք մտանջութեան մէջ:

Պերջապէս հեռւում ճանապարհի վրայ ձիաւորը երեաց, իսկ նրա յետելից սազը: Ամուսինս լակոյն դաւրս վագեց. մի քանի րոպէից յետոյ նա զրկած ներս բերեց Գոհարիկին, որ բոլորովին թրջուած ցեխուուած էր և փաթաթուած փսխաթների ու մուշտակների մէջ:

— Գոհարիկ, ամօթ չէ, այս անձրեխն ինչու զնացիր, առաջ վազելով ասացի ես: Ճուտովի հանուիր, թրջուել ես, մրսել ես:

— Ամենեին, հօրաքոյր, պատասխանեց աղջիկը, յետ զցելով վրալից այն բաները, որոնց մէջ փաթաթուած էր: Միայն ոտներս մի փոքր թրջուեցին, ուրիշ ոչինչ:

— Եւ ինչո՞ւ գնացիր, ասաց նրան ամուսինա, չէ՞ որ հօրաքոյրդ երեկ նախազգուշացը լինեց, թէ վատ եղանակին այդպիսի հեռու տեղ չէ կալելի գնալ:

— Ա՛խ, քեռի, աղաղակեց աղջիկը, ճըշմարիտ եմ ասում, որ չէի կարող լսել հօրաքրոջու շարունակ աչքիս առաջ պատկերանում էր, թէ ինչպէս խեղճերը կուրախանան երբ կը ստանան ձեր ուղարկած փողերը, ինձ թւում էր, թէ մի մեծ անխղճութիւն կըլինէր, վատ եղանակի պատճառով, մի օր աւել տանջել նրանց:

— Բայց չէ՞ որ դու էլ կարող էիր մըսել: Կառապանի փոխարէն փոքրիկ տղայի հետ ես գնացել, եթէ նա սայլը շըջէր...

— Հոգ չէ, պատասխանեց աղջիկը, ուրախ ուրախ գլուխը շարժելով. ճանապարհը փափուկ էր, չէի ջարդուի, իսկ եթէ մի տեղս էլ ցաւցնէի կամ թեթև ջերմ ստանայի, մեծ բան չէր:

Այսպիսի դատողութեան դէմ առարկելն աւելորդ էր: Ես ստիպեցի Գոհարիկին կօշիկները փոխել և յետոյ բոլորս միասին նստեցինք

ճաշելու: Գոհարիկը պատմում էր, թէ ինչպէս գիւղացիներն ուրախացել են ամուսնուս ուղարկած փողով, ինչպէս նրանք վճռել են գալ և շնորհակալութիւն յալտնել նրան. ինչպէս ինքը բաժանել է իւր տարած պաշարեղէնն ամենաչքաւորներին, իսկ երեխանելին մի մի կտոր հաց է տուել:

— Իսկ քեզանից շատ շնորհակալ եղան, հարցը ես:

— Ո՛հ, սաստիկ, խիղճս տանջում էր ինձ: Նրանք չէին ուղում հասկանալ, որ ես ձեր կողմից էի գնացել, իսկ ինքս ոչինչ չունէի նրանց բաժանելու:

Այս ասելով՝ աղջիկն ամաչեց և գլուխը տիսրութեամբ կախ դցեց:

Այս բոլորը լսելուց յետով անկարելի էր նրան յանդիմանել: Ես զգում էի, որ այդ անհնազանդ և կամակոր աղջկանն առաջուանից աւելի ջերմ սիրով եմ սիրում. ամուսնուս աչքերից ևս նկատում էի, որ նա էլ նոյնն է զգում:

Ժամանակն արագ էր անցնում. արդէն օգոստոսի կէսն էր. պէտք էր, որ երկու աղ-

ջիկները քաղաք վերադառնային: Մենք, որ-  
քան կարելի էր, յետաձգում էինք նրանց ճա-  
նապարհ դնելու օրը, բայց և այնպէս ստիպուած  
էինք շուտով բաժանուել նրանցից:

Դուանն արդէն կանգնած էր կառքը, որ  
նրանց երկաթուղու կայարանը պիտի տանէր.  
Նրա մէջ դարսեցին աղջիկների իրեղէններն ու  
գիւղական դանազան ընծաները, որ մենք ու-  
ղարկում էինք քաղաքում ապրող մեր ազգա-  
կաններին: Հրաժեշտի րոպէն հասաւ: Աստղիկը  
համբուրեց ինձ և ամուսնուս, սիրալիր կերպով  
շնորհակալութիւն յայտնեց որ մենք բարի ենք  
եղել դէպի նրանց, քաղցրութեամբ գլուխ տու-  
եց դռան մօտ կանգնած ծառաներին, յետոյ  
հանգիստ կառք նստեց և խսկոյն սկսեց շուրջը  
նայել՝ արդեօք ոչինչ չէ մոռացել իւր իրեղէն-  
ներից: Փոհարիկն առանց մի խօսք ասելու ըն-  
կաւ ամուսնուս վզովը, իմ վզովը, յետոյ վաղեց  
բոլոր ծառաների հետ համբուրուելու. դարձեալ  
փաթաթուեց ինձ և սկսեց այնքան համբու-  
րել, մինչեւ որ ամուսինս ասաց.

— Թէհ, բաւական է, սիրելիս, ձիերը յոդ-  
նեցին կանգնելուց:

Այն ժամանակ նա կարմրած աչքերով մը-  
տաւ կառքը, մի կերպ տեղաւորուեց, ուշա-  
դրութիւն չգարձնելով, որ անհանգստացնում է  
իւր ուղեկցին, և սկսեց գլխով անել մեզ, մին-  
չեւ որ կառքը հեռացաւ և մենք էլ անյարտա-  
ցանք նրա աչքից:

Ես մի քանի րոպէ էլի կանգնեցի դուրսը և յե-  
տու ներս գնացի: Սեղանատանը՝ լուսամուտի մօտ  
կանգնած էր ամուսինս և անթարթ աչքով նայում  
էր հեռում արագութեամբ սլացող կառքին:

Ես մօտեցայ նրան:

— Գնացին... և մենք ծերուկներս դարձեալ  
մնացինք մէն մենակ:

— Լսիր, ասաց ամուսինս, արագութեամբ  
երեսը դէպի ինձ դարձնելով, եղքօրդ զրիր,  
որ նա անպատճառ ամեն ամառ իւր աղջկան  
մեզ մօտ հիւր ուղարկէ:

— Փոհարիկին մասին է խօսքդ, զարմա-  
ցած հարցրի ես:

— Ի հարկ է, ապա ում մասին:

— Դու այնքան յաճախ բարկանում էիր  
փոհարիկի վրայ, որ ինձ թւում էր, թէ քեզ  
Աստղիկն է աւելի դուր գալիս:

— Ի՞նչ ես ասում, Աստղիկի մասին ով է  
մտածում: Իսկ Գոհարիկը... ես պատրաստ եմ  
ամբողջ կարողութիւնս տալ, միայն թէ նա  
մեր աղջիկը լինի և երբէք մեզանից չկեռանայ:

Զարմանալի բան. այդ աղջիկներից մէկին  
մենք միշտ զովում էինք, ամբողջ ամառը ոչ  
մի անգամ հարկէ չէ եղել նրան յանդիմանել,  
բայց և այնպէս մենք սառն էինք վերաբերում  
դէպի նրան. նա մեղ օտար էր թւում և մենք  
ոչ մի անգամ ցանկութիւն չզգացինք դարձեալ  
շուտով տեսնուել նրա հետ: Միւսը՝ ընդհակա-  
ռակը, շատ յաճախ զրդում էր մեղ և սովում  
իիստ նկատողութիւններ անել իրան,  
բայց և այնպէս մենք զզում էինք, որ նա  
մօտիկ է մեր որտին, թանդ է մեղ համար և  
նրա բացակայութիւնը ոչ մի բանով չէ կարելի  
փոխարինել: Ինչով բացատրել այս: Արդեօք  
նրանով, որ մէկի հաճոյական արտաքինը ծած-  
կում էր նրա՝ դէպի շրջապատողներն ունեցած  
անտարբերութիւնը, իսկ միւսը՝ չնայելով իւր  
ունեցած բոլոր մանկական թերութիւններին,  
անկեղծ էր, ուղղամիտ և ուրիշի ցաւերին սըր-  
տանց կարեկցում: Էր:

८०  
८१  
८२  
८३

0004719  
0004711  
0004710  
0004709  
0004708  
0004707  
0004706  
0004705

410  
411  
412  
413  
414  
415  
416  
417

2013

ՀՀ Ազգային գրադարան




NL0004712

ՀՀ Ազգային գրադարան



NL0004711

ՀՀ Ազգային գրադարան



NL0004710

ՀՀ Ազգային գրադարան




NL0004709

ՀՀ Ազգային գրադարան



NL0004708

ՀՀ Ազգային գրադարան



NL0004707

ՀՀ Ազգային գրադարան



NL0004706

ՀՀ Ազգային գրադարան



NL0004705

